Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
օգոստոսի 8-ի N 1247-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԼԻԱԶՈՐՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՌԵԵՍՏՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ

1. «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

1) 303-րդ հոդվածով սահմանված՝ ծառայողական պարտականությունները կատարելիս մաքսային մարմնի պաշտոնատար անձին վիրավորանք հասցնելը.

2) 304-րդ հոդվածով սահմանված՝ մաքսային գործառնություններ կամ մաքսային հսկողություն իրականացնելու համար փաստաթղթեր և տեղեկություններ մաքսային մարմին չներկայացնելը.

3) 305-րդ հոդվածով սահմանված՝ մաքսային հսկողության ներքո փոխադրվող ապրանքները, տրանսպորտային միջոցները կամ ուղեկցող փաստաթղթերը մաքսային մարմին չհասցնելը կամ մաքսային տարանցման ժամկետը կամ տարանցման երթուղին չպահպանելը կամ ապրանքները կամ տրանսպորտային միջոցները մաքսային մարմնի սահմանած առաքման վայրից տարբերվող այլ վայր հասցնելը.

4) 306-րդ հոդվածով սահմանված՝ մաքսային նույնականացման միջոցները հանելը, վնասելը, կորցնելը կամ փոխելը.

5) 307-րդ հոդվածով սահմանված՝ առանց մաքսային մարմնի թույլտվության բեռնային և այլ գործառնությունների կատարումը.

6) 308-րդ հոդվածով սահմանված՝ առանց մաքսային մարմնի թույլտվության ապրանքներ հանձնելը, օտարելը, ոչնչացնելը, ինչպես նաև կորցնելը.

7) 310-րդ հոդվածով սահմանված՝ հետագա արտահանման կամ հետագա ներմուծման պարտավորությունները խախտելը.

8) 311-րդ հոդվածով սահմանված՝ մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ արգելված գործողություններ կատարելը.

9) 316-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված՝ ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ դրանց հայտարարագրելը ոչ իրենց անվանմամբ կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը.

10) 317-րդ հոդվածով սահմանված՝ պայմանական բաց թողնված ապրանքները և տրանսպորտային միջոցներն անօրինական օգտագործելը կամ տնօրինելը.

11) 318-րդ հոդվածով սահմանված՝ մաքսային վճարների, մաքսային մարմինների կողմից գանձվող այլ հարկերի, տուրքերի և վճարների վճարման սահմանված ժամկետները խախտելը.

12) 320-րդ հոդվածով սահմանված՝ լիազորված տնտեսական օպերատորի կողմից Միության մաքսային օրենսգրքով սահմանված պարտականությունները չկատարելը:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի՝

1) 165-րդ հոդվածով սահմանված՝ արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների և իրավական այլ ակտերի խախտումները.

2) 169[1]-րդ հոդվածով սահմանված՝ հաշվապահական հաշվառումը (գրանցումը) խախտումով վարելը, երբ դա կարող է առաջացնել (առաջացրել է) հարկի նվազեցում, կամ հայտարարագիրը, հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելը.

3) 169^{2}-րդ հոդվածով սահմանված՝ պաշտոնական վիճակագրական դիտարկումների իրականացման համար անհրաժեշտ տվյալներ ներկայացնելու կարգը խախտելը կամ տվյալներն աղավաղելը.

4) 169^{11}-րդ հոդվածով սահմանված՝ հաշվապահական հաշվառման փաստաթղթերը և այլ տեղեկությունները չպահպանելը.

5) 182.6-րդ հոդվածով սահմանված՝ հարկային հսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի աշխատանքին խոչընդոտելը:

3. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձի վկայականի գործողությունը կասեցնելու համար հիմք են հանդիսանում նաև՝

1) սույն որոշման N 1 հավելվածի 1-ին կետով սահմանված՝ «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված իրավախախտումների հատկանիշներով վարչական վարույթի հարուցումը, բացառությամբ «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 293-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված դեպքի.

2) սույն որոշման N 1 հավելվածի 2-րդ կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված իրավախախտումների հատկանիշներով քրեական վարույթի նախաձեռնումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

09.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ